

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

JOURNAL OF ORIENTAL STUDIES

*Նվիրվում է պրոֆեսոր
Գուրգեն Մելիքյանի 85-ամյակին*

№ 20

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2021

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Մելքոնյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր (խմբագիր)

Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր

Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ

Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ

Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր

Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր

Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ

Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ

Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր

Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.

Տեր-Սաթևոսյան Վահրամ պ.գ.դ.

Գրեկյան Երվանդ պ.գ.դ.

Րեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)

Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)

Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ)

Իլյա Յակուբովիչ բ.գ.դ., պրոֆեսոր (Գերմանիա)

Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Քննարկի Միոգոյան

ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ – 85.....7-9

Արաբագիտություն

Հայկ Քոչարյան, Մոհամմեդ Հաջ Իբրահիմ

«ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ 21-ՐԴ ԴԱՐՈՒՄ.
ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ, ՏԵՍԱԿԱՆ ՈՒ
ԻՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ»
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ (ՄԱՍ Բ)10-21

Մերի Չիլիսիյան

«ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ» ԴՈՒՐԱՆՈՒՄ. IHYĀ’ AL-MAWĀT
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ.....22-29

Հարություն Մայժևոյան

ԱՄՆ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԾԱՅՐԱՀԵՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՍ
ՊԱՅՔԱՐՈՒՄ («ԱԼ-ԿԱԻԴԱ»-Ի ՕՐԻՆԱԿՈՎ).....30-39

Մոհամմեդ Հաջ Իբրահիմ

ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՍ ՊԱՅՔԱՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ
ՇՐՋԱՆԱԿԻ ՄՇԱԿՈՒՄԸ 9/11-ԻՑ ՀԵՏՈ.....40-46

Համիկ Երիցյան

ԲԱԶՄԱՍՇԱԿՈՒԹՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ
ՀԱՆՐԱԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՁԵՎՎՈՐՄԱՆ
ԳՈՐԾՈՆ (ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՅՅԱԼ ԷՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՕՐԻՆԱԿՈՎ).....47-54

Թյուրքագիտություն

Վարուժան Գեղամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹՈՒՐԹԻԱՅԻ
ՊԵՏԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԻ ԵՎ ՀՈՏՈՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ 2019-2021ԹԹ.....55-71

Մարիամ Մելքոնյան

ՀԱՅԱՏՅԱՑՈՒԹՅԱՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ «ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔՆ» ԻԼՀԱՄ ԱԼԻԵՎԻ ԵԼՈՒՅԹՆԵՐՈՒՄ 72-86

Ռաֆիկ Խաչատրյան

1974 թ.-ի ԿԻՊՐՈՍ ԹՈՒՐԶԱԿԱՆ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ՆԱԽԱԴԻՅԱԼՆԵՐԸ 87-98

Գառնիկ Դավթյան

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԸ ԱԴԻԲԵՋԱՆՈՒՄ 99-105

Թամարա Աղանյայան

ՊԱՆԹՅՈՒՐՔԻՍՏ ԳՐՈՀԱՅԻՆՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ. «ԿՈՄԱՆԴՈՍՆԵՐԻ ՃԱՄԲԱՐՆԵՐԻ» ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ, ՆՊԱՏԱԿԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (1968-1971 թթ.) 106-117

Իրանագիտություն

Լիանա Պետրոսյան

ԻԻՀ-ՈՒՄ ԹԱԼԻՇ ՆԱՀԱՆԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԸ Մ. ԱՀՄԱԴԻՆԵՏԱԴԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ 118-123

Անի Նահապետյան

ՀՐԵԱՆԵՐԸ ԿՅՈՒՐՈՍ Բ ՄԵԾԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐՁԻՆԻՍ ԿԵՐՊԱՐՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ 124-140

Նարե Գևորգյան

ԻԻՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԽՈՐՀՐԴՈՒՄ ԱԼԻ ԱՔԲԱՐ ՀԱՇԵՄԻ ՌԱՖՍԱՆՋԱՆԻԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 141-152

Յասեր Քարամզադե Հաֆթխանի

ԹԱԼԻՇԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊՈԵԶԻԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ 153-160

CONTENT

<i>Knarik Mirzoyan</i> Gurgen Melikyan - 85.....	7-16
---	------

Arabic Studies

<i>Hayk Kocharyan, Mohammed Haj Ibrahim</i> “PARADIGM OF TERRORISM IN THE 21ST CENTURY: A CRITICAL INVESTIGATION INTO THE DEFINITIONAL, THEORETICAL AND LEGAL FRAMEWORKS ASSOCIATED WITH TERRORISM” SURVEY (PART TWO).....	10-21
--	-------

<i>Meri Chplakhyan</i> «AGRICULTURE» FROM THE PERSPECTIVE OF AL-QUR’AN. DEFINITION OF THE CONCEPT: «IHYĀ’ AL-MAWĀT».....	22-29
--	-------

<i>Harutyun Matevosyan</i> US FOREIGN POLICY CHANGE IN STRUGGLE WITH ISLAMIC EXTREMISM (EXAMPLE OF AL-QAEDA).....	30-39
---	-------

<i>Mohammed Haj Ibrahim</i> EVOLVING LEGAL FRAMEWORKS IN COUNTERING TERRORISM AFTER 9/11.....	40-46
---	-------

<i>Hasmik Yeritsyan</i> MULTICULTURE AS A FACTOR FOR FORMING SOCIOLINGUISTIC SITUATION (EXAMPLE OF THE UNITED ARAB EMIRATES).....	47-54
--	-------

Turkic Studies

<i>Varujan Geghamyan</i> MAIN THESES OF TURKEY’S STATE DISCOURSE AND RHETORIC ABOUT ARMENIA AND ARMENIANS IN 2019-2021.....	55-71
--	-------

<i>Mariam Melkonyan</i> DEMONSTRATIONS OF ARMENOPHOBIA AND	
---	--

"HATE SPEECH" IN THE TALKS OF ILHAM ALIYEV.....	72-86
<i>Rafik Khachatryan</i> THE CYPRUS TURKISH INVASION OF 1974 AND ITS PRECONDITIONS.....	87-98
<i>Garnik Davtyan</i> AZERBAIJANI ELECTION OVERVIEW.....	99-105
<i>Tamara Aghamalyan</i> PANTURKIST MILITANTS IN TURKEY: THE PROCESS OF FORMULATION, AIMS, ACTIVITY OF THE CAMPS OF COMMANDOS.....	106-117

Iranian Studies

<i>Liana Petrosyan</i> THE DOMESTIC POLITICAL DISCOURSE ON THE FORMATION OF TALYSH PROVINCE IN THE ISLAMIC REPUBLIC OF IRAN DURING THE REIGN OF M. AHMADINEJAD.....	118-123
<i>Ani Nahapetyan</i> JEWS IN THE GREAT POLITICAL PROGRAMS of CYRUS II AND THE LATEST CHARACTER IN "THE BIBLE"	124-140
<i>Nare Gevorgyan</i> THE ROLE AND ACTIVITY OF ALI AKBAR HASHEMI RAFSANJANI IN THE ASAMBLEA OF EXPERTS OF PUBLIC ADMINISTRATION OF THE ISLAMIC REPUBLIC OF IRAN.....	141-152
<i>Yaser Karamzadeh Haftkhani</i> AN INVESTIGATION OF THE STRUCTURE OF TALYSHI FOLK POETRY.....	153-160

Մարիամ Մելքոնյան¹

**ՀԱՅԱՏՅԱՑՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ
«ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔՆ» ԻԼՀԱՄ ԱԼԻԵՎԻ ԵԼՈՒՅԹՆԵՐՈՒՄ²**

Բանալի բառեր՝ հայատյացություն, հակահայ քարոզություն, հակամարտություն, պատերազմ, աստվածության խոսք, քարոզչական գործոն:

*Եթե զանգվածները կարող են սիրել՝ առանց իմանալու պատճառը,
ապա նրանք նաև ստում են՝ առանց մեծ հիմքերի:
Ուկրաին Շեքսպիր*

ԻՄՀՄ փլուզումից և Ադրբեջանի անկախացումից հետո տարածաշրջանում տեղի ունեցող քաղաքական գործընթացները, մասնավորապես Ղարաբաղյան առաջին պատերազմը և Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը, վերաիմաստավորեցին և նոր շունչ հաղորդեցին այդ երկրում բավականին խորը արմատներ ունեցող հայատյացությամբ³: Հակահայ քարոզչությունը բարձրացվեց պետական մակարդակի՝ ընդգրկելով հասարակական-քաղաքական տարբեր ուղղություններ:

Ադրբեջանի ներքին քաղաքական կյանքը կարելի է բնորոշել ավանդական հասարակության հենքի վրա կառուցված ավտորիտար համակարգերին բնորոշ հիմնական առանձնահատկություններով: Համակարգի կենտրոնում գտնվում է Իլիամ Ալիևը և իր մերձավոր շրջապատը, որոնց շուրջ ուղղահայաց հիերարխիկ կերպով դասավորված են բոլոր ուժային կենտրոնները⁴: Ինչպես բոլոր նմանատիպ համակարգերի պարագայում Ադրբեջանի իշխանություններին անհրաժեշտ է մշակել սոցիալական տարբեր համախմբող գործոններ, որոնց միջոցով հնարավոր կլինի կառավարելի պահել երկիրը: Մինչև 44-օրյա պատերազմը համախմբող սոցիալական գործոն էին Ղարաբաղի և հայկական թեմաները, Արցախյան

¹ ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի դասախոս, էլ. փոստ՝ mariam.melkonyan@ysu.am

² Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ 19YR-5I043 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

³ Ադրբեջանում հայատյացության ձևավորման, նորանկախ Ադրբեջանում դրա առանձին դրսևորումների մասին մանրամասն տե՛ս Դավթյան Գ., Հայատյացությունը Ադրբեջանի պետական գաղափարախոսության հիմքում, Երևան, 2019, էջ 24-93:

⁴ Գեղամյան Վ., Էլբակյան Է., Ժամանակակից Ադրբեջան, Տեղեկագիրք, Երևան, ԵՊՀ հրատ., 2020, էջ 59:

հակամարտությունն ու սպասվելիք պատերազմը (Ղարաբաղի «ազատագրումն օկուպացիայից»-Մ. Մ.)⁵:

Արցախյան երկրորդ պատերազմից հետո քարոզչական որոշ թեզեր և ուղղություններ փոփոխություններ են կրել, մինչդեռ հայաստացույթունը նոր թափ է ստացել և շարունակում է մնալ քարոզչական բարձրակետում: Ինչպես նշում են փորձագետներ Արմինե Ադիբեկյանը և Անժելա Էլիբեգովան, Ադրբեջանում հայաստացույթյան գաղափարական հիմքն ու քարոզչական ազդակները գալիս են հենց իշխանական հարթակներից⁶: Պետական տարբեր պաշտոնյաներ՝ պատգամավորից մինչև երկրի նախագահ Ի. Ալիև, իրենց ելույթները համեմում են հակահայկականության ու արմենոֆոբիայի ամենասուր և հակամարդկային ձևակերպումներով: 44-օրյա պատերազմի ընթացքում նախագահ Ի. Ալիևը պարբերաբար ելույթներով դիմում էր սեփական հանրությանը՝ կոշտ ուղերձներ հղելով նաև աշխարհի երկրների առաջնորդներին և հայ ժողովրդին: Ի. Ալիևը, իր խոսքում չխուսափելով հայությանն ուղղված բացահայտ ծաղրից, ռասիստական, քաղաքակիրթ աշխարհի և մարդկության համար անընդունելի ձևակերպումներ էր օգտագործում: Այդ շովինիստական խոսքերն իրենց զագայթնակետին հասան պատերազմի ավարտի հաջող օրը՝ 2020 թ. նոյեմբերի 10-ի ուղերձում, որտեղ Ալիևը մասնավորապես ասաց հետևյալը. «...Մենք ծնկի բերեցինք նրանց, սրս-նրս փեշից կպած մարդ չմնաց, որ այս 40 և ավել օրվա ընթացքում չզգվեցնի, օգնություն չխնդրի, ինքն իրեն չնվաստացնի, մենք ենք նրան նվաստացրել, լավ ենք արել (իմա՝ ՀՀ վարչապետին – Մ. Մ.)... Իրենց տեղը ցույց տվեցինք, դաս տվեցինք, նրանց (իմա՝ հայերին – Մ. Մ.) քշել ենք մեր հողերից, շանր քշելու պես ենք քշել, ասել էի, որ քշելու ենք, շան պես ենք քշելու և քշել ենք, շան պես քշել ենք»⁷:

Պատերազմի ընթացքում Ի. Ալիևի և այլ պաշտոնյաների ելույթներում աստելության խոսքի դրսևորումներին բազմիցս անդրադարձել է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը: Հայաստացույթյան և աստելության քարոզ բոլոր արտահայտումները տեղ են գտել պաշտպանի արտահերթ զեկույցում⁸:

⁵ Նույն տեղում:

⁶ Адибегян А., Элибегова А., Армянофобия в Азербайджане, Ереван, 2013, стр. 90.

⁷ St'ev Ilham Əliyev xalqa müraciət edib,

<https://www.youtube.com/watch?v=KJyfXgAlv8Y> (10.11.2021)

⁸ Մանրամասն տե՛ս AD HOC Public Report Organized Hate Speech and Animosity Towards Ethnic Armenians in Azerbaijan as Root Causes of Ethnically Based Torture and Inhuman Treatment by Azerbaijani Armed Forces, (September-November 2020) Evidence-based, Yerevan-Stepanakert, December,

Պաշտպանը հստակ արձանագրել է, որ Ադրբեջանի նախագահը ողջ հայ ժողովրդի ու Հայաստանի բնակչության մասին խոսում է էթնիկ գոտումների ու ցեղասպանության բացահայտ սպառնալիքներով, բացահայտ վիրավորում է հայ ժողովրդի արժանապատվությունը, հրահրում թշնամանք և դա անում է աշխարհում յուրաքանչյուր հայի, Հայաստանում ապրող յուրաքանչյուր մարդու անձնական արժանապատվությունը նվաստացնելու նպատակով: Ա. Թաթոյանը նշում է, որ խոսքը հայերի նկատմամբ պետական բարձր մակարդակով խորքային ատելության ու թշնամանքի քաղաքականության մասին է: Այն կրում է ինստիտուցիոնալ բնույթ ու հիմքում ունի էթնիկ, իսկ առանձին դեպքերում՝ նաև կրոնական պատկանելիությունը⁹: Վերոնշյալ թշնամական և այլատյացության երանգներն ու ֆիզիկական ոչնչացման սպառնալիքները կարմիր թելի պես շարունակվել են Ադրբեջանի նախագահի հետպատերազմյան ելույթներում և հարցազրույցներում. «*Լեռնային Ղարաբաղ անունով տարածք Ադրբեջանում գոյություն չունի*», «*ԼՂ հակամարտությունը լուծված է: ...Եթե նրանք (ինս՝ հայերը) հայտարարություններից բացի, որևէ գործողության դիմեն, տեղում կոչնչացվեն*»: ... *Չանգեզուրի միջանցքը պիտի բացվի և բացվելու է*¹⁰:

«Ադրբեջանական ժողովուրդը, Ադրբեջանի զինվորը, սպան ցուցաբերեցին բարոյակահոգեբանական բարձր ոգի, պրոֆեսիոնալիզմ, հերոսություն իրենց տեղում: Նրանք մեզ տեսնելուն պես փախչում էին, իսկ մենք նրանց ամեն օր դուրս էինք շարտում»¹¹:

«Մարտի դաշտում ազատագրվեց ավելի քան 300 քաղաք ու գյուղ, շարդվեց հայկական բանակի մեջքը, ոչնչացվեց հայկական բանակը: Տասը հազար դասալիք ունեցող բանակը խայտառակություն է: Նրանք իրենց զինվորներին շղթայում էին մարտական հենակետերում, որ որպեսզի չփախչեն: Սա բարբարոսություն է, վայրագություն է սեփական զինվորի նկատմամբ»¹²:

https://www.ombuds.am/images/files/2032f021fe81176414.a649d588ad0e86.pdf?fbclid=IwAR364nlr12MsL3k-3XaBu-WC9s3J-tSvpjKUY6f0igBbjKSKfaYqQGAo_4 (01.08.2021):
⁹Տե՛ս https://www.facebook.com/permalink.php?story_fbid=792041051395102&id=100017676420633

¹⁰ Տե՛ս Ռհամ Թևիև *Azərbaycan Televiziyasına müsahibə verib*, <https://president.az/articles/51454> (10.05.2021):

¹¹ Տե՛ս Ռհամ Թևիև *Bakıda Hərbi Qənimətlər Parkının açılışında iştirak edib*, <https://president.az/articles/51067> (12.04.2021):

¹² Տե՛ս նույն տեղում:

Ի. Ալիևը բացահայտ խոսում է Ղարաբաղյան հակամարտությունը ոչ թե խաղաղ, այլ ռազմական ճանապարհով լուծելու իր բազմամյա նկրտումների մասին.

«...Վերջին 17 տարիների ընթացքում իմ բոլոր ելույթներում ես ասում էի, որ Ադրբեջանի ժողովուրդը երբեք չի հաշտվի այս օկուպացիայի հետ: Ադրբեջանը երբեք թույլ չի տա, որ իր պատմական հողերում ստեղծվի երկրորդ հայկական պետություն: Մենք երբեք չենք ընդունելու այնպիսի մի համաձայնագիր, որը լիովին չի բավարարելու մեր պահանջները: Նախապատերազմական շրջանի իմ ելույթներում, հարցազրույցներում ասում էի, որ մեզ խաղաղության որևէ կիսատ պայմանագիր պետք չէ: Մենք պետք է լիովին վերականգնենք մեր տարածքային ամբողջականությունը, մենք պետք է վերականգնենք պատմական արդարությունը, որովհետև կիսատ համաձայնագիրը չէր բավարարում մեր ժողովրդի շահերին ու չէր համապատասխանում պատմական արդարությանը: Կիսատ համաձայնագիրը կամա թե ակամա կարող էր մեծացնել պատերազմի ռիսկերը: Բսկ մեզ լիարժեք, կատարյալ հաղթանակ էր պետք: **Մենք այդ կատարյալ հաղթանակը ստացանք, ջախջախեցինք թշնամուն, ոչնչացրինք նրա բանակը և հասանք մեր ուզածին**»¹³:

«...Կարող եմ ասել, որ 2003-2020 թվականները նախապատրաստության տարիներ էին: Մենք պետք է պատրաստվեինք, և ես դա չէի թաքցնում: Ես ասում է, որ եթե հարցը խաղաղ ճանապարհով չլուծվի, այն կլուծենք ռազմական ճանապարհով: Դրա համար իմ դեմ որքան՝ ճնշումներ եղան: Խոշոր տերությունների դեկավարներն ինձ բազմիցս մեղադրեցին այն բանում, թե Բրիամ Ալիևը խաղաղություն չի ուզում, պատերազմ է ուզում, սպառնում է: Պատերազմ հնարավոր չէ: Դուք էլ, Ադրբեջանի ժողովուրդն էլ բազմիցս լսել եք, որ Լեռնային Ղարաբաղի հարցը ռազմական լուծում չունի: Մարդ չէր մնացել, որ դա չասի: Ես դրան համաձայնեցի՞: Ոչ: Բնձ բազմիցս փորձում էին հավաստացնել, որ Հայաստանի հետ ցանկացած ձևաչափով արձանագրություն ստորագրվի, որ հարցը միայն խաղաղ ճանապարհով լուծվի: Այսինքն, որ ռազմական ճանապարհը բացառվի: Ես դրան համաձայնություն չէի տվել: Դրանից հետո սկսեցին ինձ մեղադրել նրանում, որ եթե նախագահը դրան համաձայնություն չի տալիս, ուրեմն պատրաստվում է պատերազմի: Ատում էի՝ այո՛, պատրաստվում եմ, ժողովուրդն է պատրաստվում, պետությունն է պատրաստվում: Ասել էի, որ եթե հարցը խաղաղ ճանապարհով չլուծվի, այն լուծելու ենք ռազմական ճանապարհով: Ես բաց ասում էի, չէի թաքցնում: Սա նախապատրաստության շրջան էր: Մենք, սռաջին հերթին, պետք է

¹³ Yeni Azərbaycan Partiyasının VII qurultayı keçirilib, <https://president.az/articles/50798> (05.03.2021)

հոգեբանորեն պատրաստ լինեինք: Տեսե՛ք, այլ գործոնների հետ մեկտեղ այս գործոնը որոշիչ դեր է խաղացել: Պատերազմի առաջին օրերից հոգեբանական առավելությունը մեր կողմն էր: Ոչ միայն այն պատճառով, որ մենք իրավացի էինք, իսկ նրանք՝ ոչ: Հայկական պաշտոնական քարոզչությունն այնպես էր թունավորել հայ ժողովրդի ուղեղը, որ, հավանաբար, նրանց մեծ մասը կարծում էին, որ իրենք իրավացի են, որ զավթել են մեր հողերը: Ես ասում էի, որ նրանց պետք է բուժել: Նրանք հիվանդացել են, կորունավիրուսից ավելի վատ վիրուս է բնկել դրանց մեջ: Դրա պատճառը ազգայնամոլ, ռասիստ, ադրբեջանաաֆոբ, իսլամաաֆոբ հայ քաղաքական գործիչներն էին: Մենք բարոյահոգեբանական առավելություն ունեցանք ոչ միայն այն պատճառով, որ իրավացի էինք, այլև որ այս ողջ տարիների ընթացքում սարել ենք մի նպատակով՝ վերականգնել մեր տարածքային ամբողջականությունը, թշնամիներին փնդել մեր հողերից»¹⁴:

Ինչպես այս մեջբերման մեջ, Ի. Ալիևը բազմիցս անդրադարձել է տարածքային ամբողջականության թեզին՝ այն հիմնավորելով տարիներ շարունակ մշակված պատմական կեղծարարություններով.

«Այս բոլոր տարիների ընթացքում ես ասել էի, որ մեր երկրում երբեք չի կարող ստեղծվել հայկական երկրորդ պետություն: Ես ասել էի, որ հայկական առաջին պետությունը ստեղծել են մեր պատմական հողում: 1918 թ. Ադրբեջանի Ժողովրդավարական Հանրապետության առաջին որոշումներից մեկը Իրևանը (Երևանը) Հայաստանին տալն ու մայրաքաղաք դարձնելն էր: Ես դատապարտել եմ դա: Ես ասել եմ, որ դա դավաճանություն էր, աններելի դավաճանություն: Ադրբեջանի Ժողովրդավարական Հանրապետությունը ադրբեջանական ժողովրդին մեծ ծառայություններ է մատուցել, բայց մենք չպետք է կոծկենք պատմությունը, մենք պետք է իմանանք այն: Մենք պետք է իմանանք, որ 1918-1920 թվականներին՝ Ադրբեջանի Ժողովրդավարական Հանրապետության շրջանում, մեր անկախությունը թերի էր: Մենք Իրևանը նվիրեցինք Հայաստանին: Մինչդեռ այդ ժամանակ Իրևանի ներկայացուցիչները առարկում էին: Ոչ ոք ուշադրություն չդարձրեց նրանց ձայնին: Ադրբեջանի Ժողովրդավարական Հանրապետությունը չէր կարողանում լիարժեք իշխանություն սպահովել: Բրիտանացի գեներալներն այստեղ ազատ գործում էին: Անգամ մեր դրոշը հաստատելու համար բրիտանացի գեներալը պետք է հրաման տար: Պետք է ասենք, թե ինչպես եղավ ամեն ինչ: Մենք չպետք է կեղծ պատմություն հորինենք: Թե՛ խորհրդային շրջանում, թե՛ անկախության առաջին տարիներին նրանք մեզ

¹⁴ Տե՛ս Yeni Azərbaycan Partiyasının VII qurultayı keçirilib, <https://president.az/articles/50798> (05.03.2021):

համար այնքան շատ կեղծ պատմություններ են հորինել: Մենք դարձել ենք նման կեղծ պատմության պատանդ: Մենք պետք է ամեն ինչ իմանանք՝ ով ինչ դեր ունի պատմության մեջ և որն է արդյունքը»¹⁵:

Ի. Ալիևը բացահայտ կասկածի տակ է դնում Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությունը՝ արտահայտելով բացահայտ հավակնություններ ՀՀ սուվերեն տարածքի նկատմամբ.

«Մենք ուզում ենք՝ երիտասարդ սերունդն իմանա, որ Չանգեզուրը Ադրբեջանի պատմական հողն է: Չանգեզուրը Հայաստանին է տրվել 1920 թվականին՝ 101 տարի առաջ: Մինչև դա այդ տարածքը մերն էր: Գոյշա լիճը նրանք անխնամ են Սևանա լիճ: Ընդամենը նայեք 20-րդ դարի սկզբի քարտեզին, և դուք այնտեղ Սևան չեք տեսնի: Նույնը վերաբերում նաև Իրևանին (Երևանին): Նրանք ավերել են Իրևանի պատմական հատվածը: Դա ակնհայտ փաստ է, ադրբեջանցիները, այդ թվում՝ իմ նախնիները, ապրել են այնտեղ: ... Ես ասել եմ, որ մենք վերադառնալու ենք այնտեղ: Ես չեմ ասել, որ վերադառնալու ենք տանկերով: Ասել եմ, որ վերադառնալու ենք: Եթե մենք վերադառնում ենք Չանգեզուրի միջանցքին, եթե օգտագործում ենք այդ ճանապարհը, սպա ինչո՞ւ չվերադառնալ Իրևան: Ժամանակը կգա, մենք դա կանենք: Ես արտահայտում եմ իմ դիրքորոշումը»¹⁶:

Դիտարկելով դրանք ՉԼՄ-ում կարող ենք նշել, որ պատմամշակութային բաղադրիչը ադրբեջանական քարոզչության մեջ հիմնական գծերից է: Վերջին տարիներին այն զգալիորեն չի փոխվել, սակայն առավել ընդգծվել են ՀՀ-ի նկատմամբ Ադրբեջանի պահանջատիրական նկրտումները՝ «Արևմտյան Ադրբեջան» հասկացության դիսկուրսիվ ամրապնդմամբ: Ծրջանառվում է այն միտքը, որ ժամանակակից ՀՀ-ն գտնվում է ադրբեջանական տարածքում, որը տրամադրվել է հայերին բնակության նպատակով. «Ադրբեջանը հայերին տրամադրել է Իրևանի խանության տարածքները, տարածքներ Ղարաբաղում և երկրի այլ մասերում»: Պատմամշակութային համատեքստում հիմնական շեշտադրումը

¹⁵ St'u İlham Əliyev Bakıda Hərbi Qənimətlər Parkının açılışında iştirak edib, <https://president.az/articles/51067> (12.04.2021):

¹⁶ St'u İlham Əliyev ADA Universitetində keçirilən "Cənubi Qafqaza yeni baxış: münaqişədən sonra inkişaf və əməkdaşlıq" adlı beynəlxalq konfransda iştirak edib, <https://president.az/articles/51088> (13.04.2021), տե՛ս նաև https://www.youtube.com/watch?time_continue=5804&v=2TYG8zmGBms&feature=emb_logo (13.04.2021):

հայերի եկվոր լինելու և աղբրեջանցիների բնիկության ավանդական դարձած թուրք-աղբրեջանական տեսանկյունն է¹⁷:

«...Իհարկե, ևս մեկ անգամ տեսնում ենք, որ Շուշին աղբրեջանական քաղաք է, որովհետև այստեղ գրասցվում է աղբրեջանական ոգին՝ ճարտարապետական հուշարձաններ, աղբյուրներ: Չնայած թշնամին այդ աղբյուրների նախշերը փոխել է, գրույթուններն էլ ջնջել է, բայց ամեն դեպքում ամենուր, ինչպես ասում են, հողորում է աղբրեջանական մշակույթը: Մենք մշտական ենք վերադարձել, հավերժ այստեղ ենք սպրելու: Ասել եմ, որ Շուշին դառնալու է աշխարհի ամենագեղեցիկ քաղաքը: Ոչ միայն Շուշին, նաև ազատագրված մյուս բոլոր քաղաքները»¹⁸:

«Թեև փոքր քանակով, բայց այստեղ սպրել են: Մեր ունեցած տեղեկություններով (հետո մենք այդ տեղեկությունը ճշգրտեցինք) այստեղ մոտ 1600 հայ է սպրել: Նրանց մեծ մասը գինյորականներ էին, նրանց ընտանիքի անդամներն էին: Այսինքն, այստեղ երբեք հայկական բնակչություն չի եղել: Հինս տեսնում եք, թե օկուպացիայի շրջանում ինչ վիճակում է եղել: ...Պատմական շենքերն ավերվել են, քաղաքային ենթակառուցվածքներ չկան: Նայե՛ք, այս պլաները նոր չէին, բոլորը հնուց էին մնացել: Ասում էին՝ հայկական քաղաք է: Եթե հայկական քաղաք է, ինչու՞ եք այս օրը գցել: Բնչու՞ այստեղ չես սպրել, չես պահել, ավերել ես»¹⁹:

«Ցանկացել են ջնջել պատմությունը, որ մենք երբեք չվերադառնանք: Կարծում էին, որ Աղբրեջանը երբեք ոտքի չի կանգնելու: Չէին հավատում, որ կարող ենք ոտքի կանգնել: Չէին հավատում, որ մենք և՛ ուժ կարող ենք ունենալ, և՛ կանք: Այդ պատճառով էլ ասում էին՝ ամեն ինչ ավերենք, այլևս երբեք սրանք չվերադառնան: Պատմությունն էլ ջնջենք, հուշարձանները, գերեզմանները ևս ավերենք: Վաղը ասենք, որ սա հայկական հող է եղել, և այդպես էլ ասում էին: Շահբուլաղը կեղծ անվանել էին «Տիգրանակերտ»: Այսպիսի կեղծարարություն չի լինում: Ասում էին՝ Շուշին հայկական քաղաք է: Այս քաղաքը հիմնադրել է Փանահայի խանը, մենք բոլորս դա լավ գիտենք, անունն էլ դրել է Փանահաքաղ: Բնչպե՞ս է հայկական քաղաք եղել, եթե սրանից 275 տարի առաջ Փանահայի խանն է Աղղամից այստեղ եկել»²⁰:

Այիևը հայերին մեղադրում է Արցախի տարածքում իրականացրած «բարբարոսությունների» մեջ և փորձում հրավիրել

¹⁷ Տե՛ս Հակոբյան Լ., Աղբրեջանական հակահայ ինֆորմացիոն համակարգի քաղաքականությունը, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=13518 (07.07.2021):

¹⁸ Տե՛ս İlham Əliyev və birinci xanım Mehriban Əliyeva Şuşada “Xarıbülbül” festivalının açılışında iştirak ediblər, <https://president.az/articles/51465> (12.05.2021):

¹⁹ Տե՛ս նույն տեղում:

²⁰ Տե՛ս նույն տեղում:

միջազգային հանրության ուշադրությունը այս հարցին: Մեղադրանքներն ուղեկցվում են հայերին ոչնչացնելու մասին սպառնալից արտահայտություններով. «Ես ասել եմ, ևս մեկ անգամ ուզում եմ ասել, որ ազատագրված տարածքների տարածքը հավասար է 4 Լյուքսեմբուրգի տարածքին: Կարծում եմ սա բավարար հանգամանք է պատկերացնելու համար: Լյուքսեմբուրգից 4 անգամ մեծ տարածքը մենք պետք է գրոյից կառուցենք, որովհետև անիծյալ թշնամին այս հողերում ամեն ինչ, բոլոր շենքերը ավերել է: Հինա բոլոր արտասահմանյան հյուրերը սա տեսնում են: Նրանք իրենց սեփական ւաքերով տեսնում են հայկական բարբարոսությունը: Մա չտեսնված բարբարոսություն է: Համաշխարհային պատմության մեջ շատ պատերազմներ են եղել, բայց այս սատիճան դաժանություն, թշնամանք, ըստ իս, համաշխարհային պատերազմների պատմության մեջ չի եղել: Նույնիսկ եթե համեմատենք Երկրորդ համաշխարհային պատերազմի հետ, այն ժամանակ այսպիսի վայրագություն չէր կատարվում, կրոնական հուշարձանները չէին ավերվում: Այս ամենը մենք շատ լավ գիտենք: Հայկական ֆաշիզմը բոլոր երկրներում եղած ֆաշիզմի տեսակներից ամենազզվելի, ամենադաժան ֆաշիզմն է: Մենք այս պատերազմում ոչ միայն վերականգնել ենք մեր տարածքային ամբողջականությունը, այլև հայկական ֆաշիզմը: Մա ոչ միայն Ադրբեջանի ժողովրդի, այլ ողջ աշխարհի պատմական առաքելությունն է: Հայկական ֆաշիզմը ոչնչացվել է, և նրան ոչնչացնողը եղել է Ադրբեջանի ժողովուրդը: Այսօր երբ Հայաստանում գոլիս են բարձրացնում որոշ ռևանշիստ ուժեր, պետք է իմանան, որ ցանկացած պահի, երբ պետք լինի իրենց գոլիսը ճգնվելու է: Մենք չենք կարող թույլ տալ, որ հայկական ֆաշիզմը կրկին գոլիս բարձրացնի: Մենք չենք կարող թույլ տալ, որ Հայաստանը իր բանակը կրկին բերի-հասցնի այնպիսի վիճակի, որ վերջինս մեր համար որևէ սպառնալիք ներկայացնի: Եթե մենքա հնարավոր սպառնալիք նկատենք, դարձյալ ոչնչացնելու ենք: Մա պետք է բոլորը իմանան՝ և՛ Հայաստանը, և՛ իր հովանավորները, որովհետև սա ազգային ինքնապաշտպանություն է, ազգային անվտանգության հարց է: Այս ամենին զուգահեռ չնայած, որ Հայաստանը պետական մակարդակով ադրբեջանցիների դեմ ցեղասպանություն է իրականացրել, մենք պատրաստ ենք համագործակցության: Չնայած նրանք ավերել են մեր բոլոր պատմական, կրոնական հուշարձանները, մենք պետք է սպազգային նայենք: Մենք բնականաբար երբեք չենք մոռանալու հայկական բարբարոսությունը: Ռազմական ավարի պոլսակը, որն այսօր Հայաստանում մեծ աղմուկ է բարձրացրել, մի հիմնական նպատակ ունի՝ Ադրբեջանի ժողովուրդը հայկական բարբարոսությունը երբեք չպետք է մոռանա: Մենք դա երբեք չպետք է մոռանա: Մենք դա երբեք չենք մոռանալու: Մա թող բոլորն իմանան: Մինդեռ այս ամենին զուգահեռ, մենք

մեր սեփական շահերից ելնելով, պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկենք»²¹:

Միջազգային հանրությանն ու կազմակերպություններին դիմող երկրի նախագահը չի հարգում այդ կառույցների կողմից ընդունված բանաձևերն ու կոնվենցիաները: Այդ մասին վկայում են ոչ միայն պատերազմի ժամանակ ադրբեջանական կողմի իրականացրած ռազմական ծանր հանցագործությունները, այլև հենց Ալիևի կոչերը՝ ընդունված փաստաթղթերին «ուշադրության չդարձնելու» մասին. «...Մինչդեռ մենք այսուհետ ամրացնելու ենք մեր սահմանները, ամրանալու ենք պետական սահմանին: Ոչ ոք չի կարող մեզ ճնշել, ոչ ոք չի կարող ազդել մեր վրա: Հիմա որոշ հայաստեղ երկրներ, շրջանակներ ինչ-որ հայտարարություններ են անում: Թող անեն, իրենց գործն է: Եվրոպական Խորհրդարանը կրկին կեղծ փաստերի հիման վրա բանաձև է ընդունել: Ես բողոքովին ուշադրություն չեմ դարձնում դրան: Ձեզ էլ խորհուրդ չեմ տալիս, Ադրբեջանի ժողովրդին խորհուրդ չեմ տալիս: Դրանք բողոքը անկարևոր բաներ են»²²:

Ադրբեջանական իշխանությունների կողմից խիստ դատապարտելի արարք էր 2021 թ. ապրիլին Բաքվի կենտրոնում բացված ռազմական ավարի պուրակը, որտեղ ցուցադրված են 44-օրյա պատերազմի ընթացքում առգրավված հայկական զինտեխնիկան, ինչպես նաև զոհված հայ զինվորների հանդերձանքից հատվածներ, տեղադրված են վերջիններիս ծաղրող մանեկեններ²³: Բացման արարողությանն անձամբ մասնակցող Ադրբեջանի նախագահը շարունակել է սպառնալից և սադրիչ արտահայտություններով անդրադառնալ Հայաստանին և հայերին. «...Ղարաբաղյան երկրորդ պատերազմը մեր փառահեղ պատմությունն է: Մեր ժողովուրդն այս պատերազմի հետ կապված հավերժ հպարտության զգացում է ունենալու: Մենք աշխարհին ներկայացել ենք որպես հաղթանակած ժողովուրդ: Իսկ Հայաստանը պարտված երկիր է, մեր առջև ծնկի եկած երկկիր է, գլուխն ու վիզը ծռած երկիր է ու միշտ այդպես է լինելու»²⁴:

²¹ Տե՛ս Իլհամ Օլիևեյնի Azərbaycan Televiziyasına müsahibəsi, <https://president.az/articles/51216> (20.04.2021):

²² Տե՛ս Իլհամ Օլիևեյնի Ağdam şəhərinin bərpasının təməl daşının qoyulması mərasimində iştirak edib, rayon ictimaiyyətinin nümayəndələri ilə görüşüb, <https://president.az/articles/51777> (28.05.2021):

²³ Ռազմական ավարի պուրակի մասին առավել մանրամասն տե՛ս <https://herbiqenimetlerparki.az/az> (01.08.2021):

²⁴ Տե՛ս Իլհամ Օլիևեյնի Bakıda Hərbi Qənimətlər Parkının açılışında iştirak edib, <https://president.az/articles/51067> (12.04.2021):

Աղբրեջանական կողմը բարձրագույն մակարդակով շարունակում է Հայաստանի տնտեսական շրջափակումը հպարտորեն ներկայացնել որպես սեփական հաջողություն. «Ինչի՞ ենք մենք հասել: Հիմա Հայաստանիը մեկուսացված վիճակում է, իսկ մենք մեր հարևանների հետ շատ արդյունավետ բարեկամական, ջերմ հարաբերություններ ենք կառուցել, և դա էլ էր պատրաստություն: Ես ուզում եմ բացահայտ ասել՝ եթե այս ոլորտում աշխատանքներ չտարվեին, Ղարաբաղյան երկրորդ պատերազմում կարող էին դժկարություններ առաջանալ: Իսկ Հայաստանը ինքն իրեն մեկուսացրեց: Այսինքն մենք նրանց մեկուսացրինք տարածաշրջանային բոլոր նախագծերից, նավթագազային ծրագրերից, մենք կործանել ենք նրանց տնտեսությունը և հպարտությամբ կարող ենք ասել այդ մասին: Ցանկացած անկախ տնտեսական փորձագետ կարող է ասել, որ դրա հիմնական գործոնը մենք ենք: Մենք Հայաստանը դարձրինք անորոշ, անկայուն և ապագա չունեցող մի երկիր: Այնտեղ առաջացան դեմոկրաֆիկ խնդիրներ, ինչը հանգեցրեց տնտեսական շուկայի սահմանափակմանը»²⁵:

Նույն միտքը նախագահը կրկնել է ռազմական ավարի պուրակի բացման արարողության ժամանակ. «Հողերը հավերժ կարող էին մնալ հայի ոտքի տակ: Այդ պատճառով էլ տնտեսական անկախությունն անհրաժեշտություն էր, հենց այս ոլորտում էլ պատրաստվեցինք: Հայաստանին պետք է փակուղու մեջ մտցնեինք: Բոլոր տրանսպորտային, կոմունիկացիոն, էներգետիկ ուղիներն այնպես անցկացրինք, որ Հայաստանից դուրս անցնի: Ես այնքան անշունչ երթարկվեցի, քանի որ ասում էին՝ ոչ, այս ճանապարհը պետք է Հայաստանով անցնի, երկաթուղին պետք է Հայաստանով անցնի: Բարու-Թրիլի-Կարսը չպետք է կառուցվի, մենք դրա համար վարկ չենք տրամադրելու: Ասացի՞ չես ուզում, մի տուր: Անձամբ ես Վրաստանին 725 միլիոն դոլար վարկ եմ տվել: Մեզ հաջողվեց, կառուցեցինք այն, Հայաստանը ընկավ փակուղու մեջ: Սա ինքնին հանգեցրեց նրան, որ Հայաստանից զանգվածային արտագաղթ սկսվեց: Հենց արտագաղթ է լինում, շուկան փոքրանում է, իսկ շուկայի փոքրանալու դեպքում ոչ ոք ներդրում չի անում: Մարդ պետք է խելագար լինի, որ այդ տարիներին և հատկապես հիմա Հայաստանում ներդրումներ անի: Այսպիսով տնտեսական առումով Հայաստանին խելահասցնելը մեր հիմնական պարտականություններից մեկն էր, ես դա չէի թաքցնում և դա մեզ հաջողվեց»²⁶:

²⁵ St'u Yeni Azərbaycan Partiyasının VII qurultayı keçirilib, <https://president.az/articles/50798> (05.03.2021):

²⁶ St'u İlham Əliyev Bakıda Hərbi Qənimətlər Parkının açılışında iştirak edib, <https://president.az/articles/51067> (12.04.2021):

Այսօր Ադրբեջանը չի ժխտում Հայաստանի հետ համագործակցության հնարավորությունների մասին՝ միաժամանակ նշելով, որ արցախյան հիմնախնդրի էջը փակված է և տարածաշրջանում նոր իրողություններ են ստեղծվել. «Այժմ մենք պետք է ապագային նայենք: Չնայած 30 տարվա օկուպացիայի հետևանքով ազատագրված տարածքներում լայնամասշտաբ ավերածություններին և ոչնչացմանը, Ադրբեջանը պատրաստ է նայել ապագային, որպես միասնական ինտեգրացված Հարավային Կովկասի մի մասը, պատրաստ է պլանավորել իր ապագան: ...Ինչ վերաբերում է Ադրբեջանի դիրքորոշմանն այն մասին, թե ինչ է տեղի ունեցել և ինչ է տեղի ունենալու, ապա, իհարկե, նախևառաջ կցանկանայի նշել, որ տարածաշրջանում տեղի ունեցած վերջին իրադարձությունները, Ղարաբաղյան երկրորդ պատերազմը իրավիճակը լիովին փոխեցին: Այդ պատճառով Հարավային Կովկասի համար նոր մոտեցման, նոր օրակարգի կարիք կա»²⁷: Այնուհանդերձ, ադրբեջանական կողմի դիրքորոշումն այս հարցում, մեղմ ասած, միակողմանի զիջումներ և սպառնալից երանգներ է պարունակում: Նախագահը հստակ ձևակերպել է Ադրբեջանի «խաղաղասիրական» տրամադրվածությունը. «Ես ասում էի, որ համագործակցություն հնարավոր է միայն այն դեպքում, երբ թշնամին մեր հողերից դուրս կգա: Ես կրկին հավատարիմ եմ իմ խոսքին: Հիմա թշնամին ինքը դուրս չի եկել, մենք նրան վռնդել ենք, միևնույն ժամանակ պատրաստ ենք համագործակցելու: Արդեն քանի անգամ է, ինչ Ադրբեջանի, Հայաստանի, Ռուսաստանի փոխվարչապետները հանդիպում են: Ինչի՞ մասին են խոսում: Համագործակցության մասին: Մենք դե՛մ ենք համագործակցությանը: Ոչ: Հիմա Հայաստանը խուսափում է: Հիմա Հայաստանը փորձում է խոչընդոտել Չանգեզուրի միջանցքի գործարկմանը, բայց չեն հաջողվելու: Մենք հասնելու ենք մեր բոլոր նպատակներին այնպես, ինչպես նրանց վռնդել ենք մեր հողերից»²⁸:

Ադրբեջանի ղեկավարը Հայաստանին և հայ ժողովրդին մեղադրում է ֆաշիզմի մեջ, սպառնում ոչնչացնել հայկական զինված ուժերը՝ հայկական կողմի ինքնապաշտպանական գործողություններն անգամ ներկայացնելով որպես սադրանք և ֆաշիստական սպառնալիք հարավկովկասյան տարածաշրջանի անվտանգությանը: Այս թեմային

²⁷ Տե՛ս İlham Əliyev ADA Universitetində keçirilən "Cənubi Qafqaza yeni baxış: münaqişədən sonra inkişaf və əməkdaşlıq" adlı beynəlxalq konfransda iştirak edib, <https://president.az/articles/51088> (13.04.2021), տե՛ս նաև https://www.youtube.com/watch?time_continue=5804&v=2TYG8zmGBms&feature=emb_logo (13.04.2021):

²⁸ Yeni Azərbaycan Partiyasının VII qurultayı keçirilib, <https://president.az/articles/50798> (05.03.2021):

Այլևս անդրադարձել է Արցախի օկուպացված տարրեր շրջաններ այցելելիս: Չարբայիլ (Մեխակավան) և Չանգեղան (Կովսական) կատարած այցի ժամանակ նա անդրադարձել է սահմանային միջադեպերից մեկին.

«Մինչդեռ, ցավոք սրտի, Հայաստանում գոլի են բարձրացրել նոր ռևանշիստական ուժեր, որոնք կրկին մեր դեմ մեղադրանքներով են հանդես գալիս և տարածքային պահանջներ են առաջ քաշում: Ես նրանց այստեղից ուզում եմ զգուշացնել, որ հրաժարվեն այդ կեղտոտ գործողություններից, այսպես իրենց համար վատ կլինի: Մենք Հայրենական պատերազմի շրջանում ցույց տվեցինք, թե ով ով է: Երկայծե բռունցքը թշնամու գոլիդ ճզմեց: Վերջերս Ադրբեջան-Հայաստան սահմանի Չանգեղանի ուղղությամբ մեր սահմանապահների դեմ իրականացված ռազմական սադրանքը պետք է որ այդպիսի փորձ լինի: Մենք զսպվածություն ցուցաբերելով՝ չպատասխանեցինք այդ սադրանքին, բայց սա վերջին զգուշացումն է: Եթե մեկ անգամ էլ նմանատիպ փորձ իրականացվի, թշնամին տեղում կոչնչացվի: Մենք մեր սահմանը պաշտպանում ենք և սրանից հետո էլ պաշտպանելու ենք: Յուրաքանչյուր երկրի սահման իր պետության խորհրդանիշներից մեկն է: Ադրբեջանն ամբողջովին վերականգնել է իր սահմաններն ու տարածքային ամբողջականությունը»²⁹:

Փաշինգի մասին այլևսյան սպառնալիքներն ավելի սուր արտահայտություն են ստացել Ադդամ (Ավնա) քաղաքի վերականգնման հիմնարկերի արարողությանն ունեցած ելույթի ժամանակ. «44-օրյա պատերազմի ցույց տվեց մեր ուժը: Այն ցույց տվեց մեր զինված ուժերի քաջությունը, հերոսականությունը, մեր ժողովրդի միասնությունը: Մենք բռունցքի նման միավորվելով՝ սիստարտառ հարված հասցրինք թշնամուն, նրան վրեղեցինք մեր հողերից: ... Այսուհետ Ադրբեջանը զարգանալու է որպես հաղթող երկիր: Ադրբեջանի ժողովուրդն ապրելու է հպարտության զգացումով՝ որպես հաղթանակած ժողովուրդ: Մինչդեռ Հայաստանը պարտված երկիր է, և մեր օկուպացված հողերում իրականացված փայտագույությունները վերջ դրեցին հայկական լռաբառական կազմակերպությունների ստեղծած միֆոլոգիային, քանի որ այս ավերածություններն իրականացնողը բարբարոս է: Մա այլ անուն չունի: Ոչ միայն այստեղ, ազատագրված բոլոր վայրերում նույն տեսարանն է: Ես ավտոմեքենայով հարյուրավոր կիրմետրեր այս տարածքներով անցնելիս տեսա, որ աշունձախ ամեն բան ավերվել է: Կարծես այս հողերով բարբարոս քարավան է անցել: Ես ստել եմ և ևս մեկ անգամ Հանրապետության տոնին

²⁹ Տե՛ս İlham Əliyevin Cəbrayıl və Zəngilan rayonlarına səfəri, <https://president.az/articles/51302> (26.04.2021):

Աղդամ քաղաքում եմ ցանկանում ասել, որ մեր պատերազմը միայն ֆաշիստ Հայաստան պետության դեմ չէ, մեր պատերազմը պատերազմ է ֆաշիզմի դեմ: Մեր հաղթանակը ցույց է տալիս, որ բոլոր ֆաշիստների վերջը, տեսնե՞ք, հայերի վերջի նման է լինելու: ...Ցավոք, այսօր հայկական կողմը չի հրաժարվում ասորիչ գործողություններից: Ես մի քանի օր առաջ՝ մայիսի 10-ին, Նախիջևանում գտնվելիս ասել էի այս մասին: Եթե մենք տեսնենք, որ մեր ժողովրդին, մեր պետությանը թեկուզ աննշան վտանգ է սպառնում, անմիջապես տեղում կոչնչացնենք թշնամուն: Նրանք գիտեն և տեսնում են, որ մենք ի վիճակի ենք դրան: Ուստի վերջին օրերի ընթացքում Ադրբեջան-Հայաստան սահմանային հատվածում հայկական բանակի իրականացրած սադրանքը, բնականաբար, չպետք է անպատասխան մնար և չմնաց: Հերթական անգամ խայտառակ եղան, հերթական անգամ անհեթեթ վիճակի մեջ հայտնվեցին: Հիմա ողջ աշխարհը ծիծաղում է դրանց վրա: Վարչապետը մի տարբերակ է ասում, ԳԾ պետի տեղակալն այլ բան է ասում, այն էլ՝ մի օրում: Այդ տարբերակներն էլ սուտ են: Այսինքն, 30 տարվա ընթացքում հայերը չկարողացան պետություն կառուցել: Փաստորեն, այդ ժողովուրդը չի կարողանում պետություն կառուցել: Այսինքն, այս ժողովուրդը միայն կարող է այլ մեծ տերությունների կազմում ասլքել: Միայն կարող է այդ մեծ տերությունների հնարավորություններից օգտվել և այնտեղ իր համար կյանք ստեղծել: 30 տարվա ընթացքում դրանք բացառիկ հնարավորություն ունեին: Եթե այս օկուպացիան չլիներ, հայերի կողմից մեր ժողովրդի նկատմամբ իրականացրած բարբարոսությունը չլիներ, գուցե այսօր Հայաստանը կարողանար ասլքել որպես անկախ պետություն: Հիմա տեսե՞ք, թե ինչպիսի ամոթալի վիճակում են: Բացահայտ կերպով խտտովանում են, որ իրենց պետությունը, իրենց սահմանները չեն կարող պահել: Մեղքը միմյանց վրա են բարդում՝ ներկայիս իշխանությունները նախկին իշխանությունների վրա, նախկին իշխանությունները՝ ներկայիս իշխանության վրա: Մինչդեռ իրականում նրանք բոլորը մեղավոր են, որովհետև նրանք մեծ սխալ են գործել: Նրանք չէին մտածում, որ այս աստիճան խոճուկ վիճակում կհայտնվեն, և իրենց բոլոր դժբախտությունների պատճառը ևս իրենք են»³⁰: Մինչդեռ հարկ է նշել, որ Ի. Ալիևի խոսքն ինքնին ֆաշիստական բնույթ է կրում, ինչը պետք է արժանանա միջազգային կառույցների ուշադրությանը և համապատասխան գնահատականին:

³⁰ St'u İlham Əliyev Ağdam səhərinin bərpasının təməl daşının qoyulması mərasimində iştirak edib, rayon ictimaiyyətinin nümayəndələri ilə görüşüb, <https://president.az/articles/51777> (28.05.2021), ինչպես նաև. Prezident, Ali Baş Komandan İlham Əliyev Silahlı Qüvvələr Günü münasibətilə Azərbaycan Ordusunun rəhbər və şəxsi heyətinin bir qrupu ilə görüşüb, <https://president.az/articles/52331> (28.06.2021):

Փ. գ. թ. Արմեն Սարգսյանը, քննելով հայատյացության հոգեբանական կողմերը, նշում է, որ Ադրբեջանում նկատվող բազմաբովանդակ կեղծարարությունները նպատակ ունեն խարխլել արցախահայության ինքնորոշման պատմաիրավական ու քաղաքական հիմքերը, ձևավորել Արցախի հանդեպ պահանջատիրոջ ինքնություն ունեցող ադրբեջանցի, ինչպես նաև շիկացնել հակահայկականության մթնոլորտը³¹: Ադրբեջանում հակահայկականությանը նվիրված մեկ այլ հոդվածում կարդում ենք. «...հայատյացության, ագրեսիայի սերմանման, պատմական ու մշակութային արժեքների կեղծման ու յուրացման և մի շարք այլ նենգ նպատակների իրագործմանը միտված քաղաքականությունը նորույթ չէ. Արմատները շատ խորն են և զգված են վաղուց: Նման քաղաքականության մասին բազմիցս նշել և շարունակում է իր «խոսքից հետ չկանգնել» Ադրբեջանի նախագահ Իլիամ Ալիևը, նրա նպատակը եղել և մնում է Ադրբեջանի «պատմական հողերի և տարածքների» վերականգնումը, որին հասնելու համար Ադրբեջանի օգտագործած բազում «կեղտոտ մեթոդներից» են հայատյացության սերմանումը Ադրբեջանում և այլոց պատմությունը յուրացնելու միջոցով սեփական պատմության ստեղծումը: Այս քաղաքականության անբաժան մասն է նաև հայատյացության սերմանումը, որի առավել քան ցայտուն դրսևորումներից մեկն էլ Ի. Ալիևի՝ վերջերս արած հայտարարությունն է, որում նշվում է. «Երիտասարդությունը, երեխաները պետք է ապրեն մեր պատմական հողերի վերադարձի գաղափարով՝ ներառյալ Հայաստանը»³²: 44-օրյա պատերազմից հետո նախագահ Ալիևը վերահաստատեց իր այս դիրքորոշումը՝ այս անգամ բացահայտ խոստովանելով երկրում տարված ատելության քարոզի մասին. «Երիտասարդ սերունդը մեծացել է հայրենիքի հանդեպ սիրո, թշնամու հանդեպ ստեղծության զգացումով և հենց այդ երիտասարդ սերունդն է մեր հողերը ազատագրել օկուպանտներից»³³:

Չնայած 44-օրյա պատերազմից հետո տարածված է Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության համաձայնագիր կնքելու, փակ ճանապարհներն ու հաղորդակցական ուղիները բացելու խոսույթը,

³¹ Տե՛ս Սարգսյան Ա., Հայատյացությունը Ադրբեջանում. ռեսենտիմենտի և ավտորիտարիզմի խաչմերուկում, «Քանբեր Երևանի համալսարանի», «Փիլիսոփայություն, Հոգեբանություն», Երևան, 2013, էջ 13:

³² Տե՛ս Թորոսյան Դ., Հյատյացությունը Ադրբեջանում, ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, Հասարակական գիտություններ (Մոցիոլոգիա, սոսետազիտություն, փիլիսոփայություն, հոգեբանություն, ժուռնալիստիկա), թիվ 1.7 (10), Երևան, 2015, էջ 103:

³³ Տե՛ս Yeni Azərbaycan Partiyasının VII qurultayı keçirilib, <https://president.az/articles/50798> (05.03.2021):

մինչդեռ ադրբեջանական կողմում հակահայկականությունը ոչ միայն չի նահանջել, այլև փոխակերպվելով ստացել է նոր՝ առավել վտանգավոր դրսևորումներ: Սույն հոդվածում ներկայացված ծավալուն մեջբերումները հստակ ցույց են տալիս, որ անձամբ Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևի ելույթներն առանձնանում են իրենց ֆաշիստական բնույթով և ուղիղ սպառնալիքներ են պարունակում Հայաստան պետության և հայ ժողովրդի ֆիզիկական գոյության համար: Այս երևույթը պետք է արժանանա միջազգային կառույցների ուշադրությանը և համապատասխան գնահատականից զատ այս ուղղությամբ պետք է ձեռնարկվեն գործնական քայլեր:

ПРОЯВЛЕНИЯ АРМЯНОФОБИИ И «ЯЗЫК НЕНАВИСТИ» В ВЫСТУПЛЕНИЯХ ИЛЬХАМА АЛИЕВА

Мариам Мелконян

(Резюме)

Политические процессы, происходящие в регионе после обретения Азербайджаном независимости, особенно конфликт Нагорного Карабаха, переосмыслили армянофобию, имеющей глубокие корни в этой стране. Антиармянская пропаганда была поднята на государственный уровень, включая различные общественно-политические направления. Пропаганда антиармянства, получившая новый импульс после 44-дневной войны, нашла резкие проявления в выступлениях президента Азербайджана Ильхама Алиева. В рамках данной статьи предпринята попытка изучить и выявить основные цели и направления антиармянства, которые отражены в выступлениях и интервью И. Алиева во время и после войны.

DEMONSTRATIONS OF ARMENOPHOBIA AND "HATE SPEECH" IN THE TALKS OF ILHAM ALIYEV

Mariam Melkonyan

(Summary)

The political processes taking place in the region after Azerbaijan gained independence, especially the Nagorno-Karabakh conflict, have rethought the Armenophobia, which has deep roots in this country. Anti-Armenian propaganda was raised to the state level, including various socio-political directions. The anti-Armenian propaganda, which received a new impetus after the 44-day war, found sharp demonstrations in the talks of President of Azerbaijan Ilham Aliyev. Within the framework of this article, an attempt is made to study and identify the main goals and directions of Armenophobia, which are reflected in the speeches and interviews of I. Aliyev during and after the war.